Ասլանը կրկին բաց արեց աչքերը: Այժմ ես թոյլ չտոի, որ նա դարձեալ խփէ աչքերը եւ փոքր-ինչ հանգստանայ: Իմ անհամբերութիւնը այնքան անզուսպ էր, որ ցանկանում էի տեղեկանալ, թէ ինչո՞ւ Ջալլադը այդպէս յանկարծ բաժանոեցաւ մեզանից, կամ ի՞նչ գործով պէտք է զբաղոէր նա, այդ քաղաքում մնալով:

— Դու արդէն գիտես, որ նա քահանայ է եւ բողոքական քահանայ, — իմ հարցին պատասխանեց Ասլանը, գլուխը բարձրացնելով, — իսկ այդ քաղաքում բողոքական հասարակութիւն կայ:

— Այդ ես գիտեմ: Բայց նա նրանց չէ համակրում, եւ որքան նկատեցի ես, մինչեւ անգամ զզւում է նրանցից:

— Հէնց դրա համար էլ նա վճռել է գործել նրանց մէջ, որ ուղղին, որ մոլորութեան մէջ չմնան:

— Ինչպէ՞ս մոլորութեան մէջ չմնան:

— Որ հասկանան, կրօնը եւ խղճի ազատութիւնը այլ բան է, իսկ ազգութիւնը այլ բան է: Որ իրանց հայ ճանաչեն, եւ իրանց լուսաւորչական ու կաթոլիկ եղբայրներին սիրեն:

— Լաւ չէ՞ր լինի, որ նրանք ամենեւին բաժանուած չլինէին մեզանից:

— Լաւ կը լինէր: Բայց քանի որ զանազան տխուր հանգամանքների պատճառով բաժանոել են, քանի որ իրողութիւնը արդէն կատարուած է, պէտք է հաշտոել փաստի հետ: Այժմ ի՞նչ է մնում մեզ անել, հալածե՞լ նրանց, այդ ոչինչ օգտաւէտ հետեւանքի չի հասցնի: Մեզ մնում է՝ աշխատել, կրկին կապել նրանց հետ մեզ, եթէ ոչ կրօնքով, գոնէ ազգայնական կապերով, որ աւելի ամուր է եւ հաստատուն:

— Այդ կարելի՞ է:

— Ինչո՞ւ չէ կարելի:

Ես խլեցի նրա քունը եւ հանգստութիւնը: Մեր խօսակցութեան առարկան այնքան մօտ էր նրա սրտին, որ նա պառկած տեղից բարձրացաւ եւ նստեց: Մոմի լոյսը ուղիղ ընկած էր նրա գունաթափ երեսի վրայ: Այդ դէմքի իւրաքանչիւր փոփոխութիւնը այնքան ծանօթ էր ինձ, որ երբ ես նկատում էի նրա վրայ այժմեան թախծալի դալկութիւնը, արդէն գիտէի, որ նա հոգեկան սաստիկ տանջանքի մէջ էր գտնւում: Ի՞նչ էր պատահել այնօր նրա հետ:

— Կարելի է, — կրկնեց նա: — Հայերը, սկսեալ ամենահին ժամանակներից, մի զարմանալի ընդունակութիւն ունեն, եթէ ոչ նոր կրօնքներ ստեղծելու, բայց գոնէ օտարներից ընդունած կրօնքներին ազգային գոյն ու ձեւ տա-